



ԼՐԱՏՈՒ  
ՕԻԱ

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
NEWSLETTER

NOVEMBER-DECEMBER

2  
0  
2  
3



19726 SHERMAN WAY, WINNETKA, CA 91306

E-mail [officeoia1976@gmail.com](mailto:officeoia1976@gmail.com)

**ԱՆՑԱՆ ԶԵՆՆԱՐԿՆԵՐ**

**PAST EVENTS**



ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԸՆՈՐՀԱՆԴԵԱԸ

## ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՅԱՆԵՍԻ

### “ԿԵԱՆՔԻՆ ԿԱՆՉԸ”

Հատորին

*Գրի առաւ՝*

*Տոքթ. Յովհաննէս Գ. Աւետիքեան*

Կիրակի, Նոյեմբեր 12, 2023ին, Պոլսահայ Միութեան «Հրանդ Տիկ» սրահը լի էր գրասեր եւ ընթերցասեր հասարակութեամբ, որոնք ներկայ էին “ԿԵԱՆՔԻՆ ԿԱՆՉԸ” գրքի ճնորհանդէսին, գրի առնուած Միութեան քարտուղարուհի՝ Մարիէթ Մինասեան-Օհանէսի կողմէ:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի նախաձեռնութեամբ:

Ձեռնարկին բացումը եւ հանդիսավարութիւնը կատարեց Տիկին Ալին Տօնիկեան:

Գեղարուեստական բաժնով բեմ բարձրացան Երգչուհի Սօսի Աւագեան եւ Տկ. Հիլտա Աճըիլաչ ասմունքով:

**Ամպին հրակիրուեցաւ** կրթական մշակ՝ Տկ. Հիլտա Աճըիլաչ, որ հրաշալիօրէն եւ յուզումով ներկայացուց հատորը: Տկն. Աճըիլաչի վերլուծումը ջերմօրէն գնահատուեցաւ հանդիսականներուն կողմէ:

Խօսք առաւ Մարիէթ Օհանէսը, իր շնորհակալիքն ու սրտի խօսքերը փոխանցելով ներկաներուն:

Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի կողմէ գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօզքեր հեղինակին յանձնեց յուշանուէր մը, առ ի գնահատանք իր նորատիպ հատորին:

Գրքի գինեձօնի գեղեցիկ արարողութիւնը կատարուեցաւ, որուն մասնակցեցան Պոլսահայ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօզքեր, Ատենադպիր՝ Սերժ Պուլանըքեան, նախկին ատենապետ՝ Տոքթ. Արթօ Էրսան Խաչերեան, նախկին ատենապետ՝ եւ ներկայ Ընդհանուր Ժողովի ատենապետ՝ Սիմոն Աճըիլաչ, Էսաեան Սանուց վարժարանի Յանձնախումբի ատենապետուհի՝ Իլտա Շաքարեան, իսկ ներկաներէն՝ Լուսի Գարալեան, Յակոբ Սանոսեան եւ յայտագրին մասնակցողները:

Ձեռնարկի աւարտին հեղինակը մակագրեց իր գրքերը, որուն ընթացքին տեղի ունեցաւ նկարահանում եւ պատշաճ հիւրասիրութիւն:

Նշենք թէ հատորին լրիւ հասոյթը նուիրուեցաւ Միութեան Մշակութային Ֆոնտին:



ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԸՆՈՐՀԱՆԴԵԱԸ  
**ՓՐՕՖ. ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ**  
**“YUZ YILLIK APART-HEID”**  
Հատորին

*Գրի առաւ՝ Մարիէթ Օհանէս*

Կազմակերպութեամբ՝ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, Կիրակի՝ Նոյեմբեր 19, 2023ի երեկոյեան ժամը 5ին, «Հրանդ Տիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ գրասեր շրջանակներուն մէջ ծանօթ Փրոֆ. Թաներ Աքչամի «YUZ YILLIK APART-HEID» գիրքին շնորհանդէսը, ներկայութեամբ Միութեան անդամներու, հիւրերու եւ գրասեր հասարակութեան բազմութեան:

Գրքի հեղինակ՝ Փրոֆ Թաներ Աքչամ սահիկներու ցուցադրութեամբ բացատրութիւններ փոխանցեց գրքին նիւթին մասին ըսելով թէ՝ «Իր ստեղծման օրէն ի վեր թուրքիոյ իրաւական համակարգը և անոր հիմնարկները շրջապատող մշակոյթը քաղաքացիներուն բաժնած են երեք հիմնական դասակարգերու. Ստորակարգութեան վերին մասը սիւննի մահմետական թուրք քաղաքացիներն են: 1924 թուականի Սահմանադրութեան քաղաքացիութեան մասին 88-րդ յօդուածի քննարկման ժամանակ Կելիբոլիի խորհրդարանի պատգամաւոր ճելալ Նուրի պէյը այդ շատ պարզօրէն ըսաւ՝. Երկրորդ կամ միջին խաւը բաղկացած է ալեւիներէն և այլ ոչ թուրք մահմետականներէն (քիւրտեր, չերքէզներ և այլն): Երրորդ կամ ամենացած խաւը բաղկացած է քրիստոնէաներէն և հրեաներէն: Միսալ չըլլար այս դասակարգերը որակել որպէս թրքական «արտօնեալ դասակարգի համակարգ»:

Թե՛ս մենք կարող ենք աւելի հեռուն երթալ ժամանակի մէջ՝ դէպի Օսմանեան Միլլեթ համակարգ, ապա Apartheidը հաստատուած է շարք մը բացայայտ կամ գաղտնի օրէնքներով և հրամանագրերով, որոնք հրապարակուած են Նոր խորհրդարանի կողմէ 1920 թուականի ապրիլէն սկսած՝ նշանաւորելով ժամանակակից թուրքիոյ սկիզբը: Այս օրէնքներէն և հրամանագրերէն շատերը թերևս կը գործեն այսօր: Այնտեղ, ուրտեղ անոնք ուժի մէջ չեն, երբեք չէ եղած նուազագոյն հաշիւ անոնց ապօրինութիւններուն հետ, և այդ օրէնքներու ոգին շարունակած է իր հիմնարկային ազդեցութիւնը ներքին գաղտնի նամակագրութեան միջոցով»:

Ապա Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի կողմէ Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօզքեր հեղինակին յանձնեց յուշանուէր մը, առ ի գնահատանք իր նորատիպ հատորին:

Գրքի գինեծօնի գեղեցիկ արարողութիւնը կատարուեցաւ, որուն մասնակցեցան Պոլսահայ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօզքեր, Նախկին ատենապետ՝ եւ ներկայ Ընդհանուր Ժողովի ատենապետ՝ Սիմոն Աճրիլաչ եւ իր տիկինը՝ Հիլտա, Էսաեան Սանուց վարժարանի Յանձնախումբի նախկին ատենապետուհի՝ Ալին Տօնիկեան, իսկ ներկաներէն՝ Լուսի Գարալեան, Յովսէփ Թոքթաթ, Կարպիս Սարաֆեան, Հերման Չելիք եւ Մարիէթ Օհանէս:

Փրոֆ Աքչամ՝ իր սրտի գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց բոլորին անխտիր ու մասնաւորաբար Պոլսահայ Միութեան: Եղան բարձր գնահատականներ, ինչպէս նաեւ հարցադրումներ գրքին վերաբերեալ:

Աւարտին, հեղինակը իր գրքէն օրինակներ մակագրեց հանդիսատեսներուն:

Տեղի ունեցաւ նկարահանում եւ պատշաճ հիւրասիրութիւն:

Նշենք թէ հատորին լրիւ հասոյթը նուիրուեցաւ Միութեան Մշակութային Ֆոնտին:

# ՅԱԶՈՂ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԻՇԵՐ ՄԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՉ

*Գրի առաւ՝ Մարիէթ Օհանէս*



Յինգշաբթի, Նոյեմբեր 16, 2023ին, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, տեղի ունեցաւ «Գոհաբանութեան ընթրիքի» ընտանեկան յաջող գիշեր մը Պոլսահայ Միութեան «Յրանդ Տիկ» սրահին մէջ: Ներկայ էին հիւրեր, Միութեան անդամներ եւ համակիրներ:

Ներկաները ճաշակեցին համադամ աղանդերներն ու «Պէտրէկ»ը, նաեւ աւանդական «ՅՆԴԿԱՐԱԲԸ» աղցանը, փիլաւը, դդումի քաղցրեղէնիհիւրասիրութեամբ:

Ճուրջ 70 հոգիներու ներկայութեամբ մտերմիկ գիշերը ճոխացաւ խաղերով եւ տեղեկութիւններով գոհաբանութեան մասին: Տեղի ունեցաւ հետաքրքրական խաղեր եւ բախտաւորները ստացան արժէքաւոր նուէրներ:

Ճնորհակալութիւն բոլոր ներկաներուն:

Նաեւ շնորհակալութիւն համեղ ճաշերը պատրաստող Տկ. Աղաւնի Թորոսօղլուին:

Ներկաները ունեցան մտերմիկ զրոյցի պահեր. ջինջ գիշերը իր աւարտին հասաւ հասաւ  
 ուշ ժամերուն:



Գոհաբանութեան օր (անգլ.՝ Thanksgiving Day), պետական (ազգային) տօն Միացեալ Նահանգներու եւ Քանատայի մէջ: Կը նշուի նաեւ Լիպերիա պետութեան, Փորթօ Ռիքօ կղզիին եւ Նորֆոլք կղզիին մէջ: Այդ տօնը Միացեալ Նահանգներուն մէջ կը նշուի Նոյեմբեր ամսուան չորրորդ Յինգզաբթի օրը, իսկ Քանատայի մէջ՝ Յոկտեմբերի երկրորդ երկուշաբթիօրը[1]:

Աւանդական իմաստով (որ հին ժամանակներէն սկսած յատուկ է երկրագործական մշակոյթներուն) նման տօներու ժամանակ, աշնան վերջը շնորհակալութիւն կը յայտնէին երկինքին՝ հարուստ բերքի եւ պտուղներու առատութեան համար:

Անկախութեան նուաճումէն ետք երկրին առաջին նախագահը՝ ճորճ Ուաշինկթընը առաջարկեց ամէն տարի՝ Նոյեմբերի 26-ին Գոհաբանութեան օրը նշել որպէս ազգային տօն:

1864-ին՝ Քաղաքացիական պատերազմի աւարտէն ետք ԱՄՆ-ի այդ ժամանակուան նախագահը՝ Ապրահամ Լինքոլնը իւրաքանչիւր տարուան Նոյեմբերի վերջին Յինգզաբթին հռչակեց Գոհաբանութեան Օր: 1939-ին Ֆրանքլին Տելանօ Ռուզվելթ այդ օրը փոխարինեց Նոյեմբերի նախավերջին Յինգզաբթիով, սակայն անոր հռչակագիրը պարտադիր ուժ չունէր: Ուստի նահանգներու միջեւ խզում առաջացաւ. 23 նահանգ Գոհաբանութեան Օրը կը նշէին Նոյեմբերի նախավերջին Յինգզաբթի օրը, իսկ 22 նահանգ՝ վերջին Յինգզաբթի օրը: Մնացած քանի մը նահանգներ ալ երկու օրն ալ յայտարարեցին տօնական (օրինակ՝ Թեքսասը):

1941-ին ԱՄՆ քոնկրետը ընդունեց օրինագիծ մը, որ Գոհաբանութեան Օրը պետք է տօնուի Նոյեմբերի չորրորդ Յինգզաբթի օրը: ԱՄՆ նախագահ Ֆրանքլին Տելանօ Ռուզվելթ 26 Դեկտեմբեր 1941-ին ստորագրեց այդ օրինագիծը, այդպիսով սահմանելով, որ Գոհաբանութեան

Օրը տօնուի ներկայիս ընդունուած ձեւով:

Ժամանակակից ամերիկացիները այդ օրը կ'ունեն նոյն այն կերակուրները, որոնք կերած են իրենց հեռաւոր նախնիները՝ 1621-ին՝ ի պատիւ Գոհաբանութեան Օրուան տեղի ունեցած առաջին ճաշի ժամանակ:





**MRS. SILVA KUZIKYAN**  
**(1952-2023)**



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences  
to the family of the deceased.  
The following donations were made  
in her memory.

**OIA, GENERAL FUND**

Mr.& Mrs.	Arman Yankas	500.00
Mr.& Mrs.	Arman Simonyan	100.00
Mr.& Mrs.	Hacik Urun	200.00
Mr.& Mrs.	Raffi Gulsatarian Harutyun	100.00
Mr.& Mrs.	Istanbulluoglu	100.00
Mr.& Mrs.	Nuran Ishanyan	100.00
Mr.& Mrs.	Ared Sahnazoglu Murat Hagop	150.00
Mr.& Mrs.	Sahnazoglu	150.00
Mr.& Mrs.	Shant Tetikoglu	60.00

**1,460.00**

Մահը հարիւր ձեւերով մեր շուրջ  
արդէն կը ծաղկի՝  
օրինաչափ մեր քայլերէն, չոռոգուած  
եւ լոյսէ հեռու ձգտումներէն  
սիհարկեց, ապրումներու  
սերմութեամբ մաքսանեց:



**DEACON MIHRAN SAHBAZ**  
**(1953-2023)**



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences  
to the family of the deceased.  
The following donations were made  
in his memory.

**OIA, GENERAL FUND**

Mr.	Ferah Dauzat Gabriel K.	250.00
Mr.& Mrs.	Agopyan	200.00
Mr.& Mrs.	Kirkor Culhaoglu	200.00
Mrs.	Arlene Kedikian	100.00
Mr.	Sevag Derderian	50.00

**OIA, AGOP SARAFUGLU FUND**

	Comex International	500.00
Mr.& Mrs.	Chris Sarafoglu	500.00

**OIA, BEDROS AKPULAT FUND**

Mr.& Mrs.	Alen Akpulat	500.00
-----------	--------------	--------

**2,300.00**





**MR. HACATUR HALICI  
(1954-2023)**



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences to the  
family of the deceased.  
The following donations were made in his  
memory.

**OIA, GENERAL FUND**

Agavni-Arden-Yeraz-Sevan, Bicakci (Ist)	300.00
Mr.& Mrs. Parunak Celikian	250.00
Mr. Karnik Ohanian	100.00
Mr.& Mrs. Avedis Apik	100.00
Mr.& Mrs. Istepan Tegelecian	100.00
Mr. Kirkor Cancik	100.00
Mr.& Mrs. Mihran Kalayci	100.00
Mr.& Mrs. Setrak Hamparsum	100.00
Mr.& Mrs. Toros Kayserlioglu	100.00
Mr.& Mrs. Varujan Saracyan	100.00
Anonymous	50.00
Mr.& Mrs. Ara Dugen (Ist)	50.00
Mr.& Mrs. Erman Hacyan (Ist)	50.00
Mr.& Mrs. Harutyun Kavafyan	50.00
Mr.& Mrs. Haygaram Asinmaz (Ist)	50.00

**OIA, AGOP SARAFUGLU FUND**

Comex International	500.00
---------------------	--------

**OIA, ANNA KOSKER FUND**

Dr.& Mrs. Mark M. Kosker	250.00
Mr. Herman Yaylaoglu	100.00

**2,450.00**



**MISS. ALTUN AGAVNI DEMIRJIAN  
(1947-2023)**



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences to  
the family of the deceased.  
The following donations were made in  
her memory.

**OIA, GENERAL FUND**

Mr.& Mrs. Osep Tokat	500.00
Mr.& Mrs. Hacik Urun	300.00
Mrs. Tamara Nizamian	250.00
Mr.& Mrs. Parseh Demirjian	150.00
Ms. Seta Kosker	100.00
Mr.& Mrs. Serkis Cicek	100.00
Mr.& Mrs. Raffi Gulsatarian	100.00
Ohannes	
Mr.& Mrs. Kurkcuoglu	100.00
Ohannes K.	
Mr.& Mrs. Avedikyan	100.00
Mr.& Mrs. Nishan Lachinian	100.00
Mr. Mamas Yanik	100.00
Mr.& Mrs. Harutyun Boyaci	100.00
Miss Karin Oz	50.00
Dr.& Mrs. Mark M. Kosker	250.00

**OIA, AGOP KILAVUZ FUND**

Mr.& Mrs. Vace Kilavuz	200.00
------------------------	--------

**2,500.00**

**ՅԱՌԱՋԻԿԱՅ  
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ**



**ՊՈԼՍԱՅԱՅ  
ՄԻՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՅԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ  
Փետրուար 2024**



**ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ԳԻՇԵՐ  
Միուլթեան  
Կեդրոնը  
Փետրուար 15, 2024**



**• ԳԻՆԵՁՕՆ-  
ՇՆՈՐՀԱՆԴԵՍ  
Յովսէփ Թոքաթի  
Նորատիպ հատորին  
Միուլթեան կեդրոնը  
Մարտ 2024**



Հրանդ Տիկի Նահատակութեան  
Ոգեկոչման երեկոյ,  
Կիրակի, Յունուար 21, 2023



**OIA GENERAL  
ASSEMBLY  
February 2024**



**FAMILY NIGHT**

February 15, 2024



**BOOK LAUNCHING  
Hovsep Tokat's  
NEWLY RELEASED BOOK  
March 2024**



**Commemoration evening for  
late Hrant Dink  
Sunday, January 21, 2023 at  
OIA Hall.**

